

անկախ
տարա-
գիւրը
երես-
նու
թու
թիւ
անկախ
գաւա-
նակ
անհան
9 ին
ցի մեծ
ուն է
րուրի:
ջացաւ
գու-
նէ ար-
աւ ա-
մանի
ին էր,
ինչ-
րայց
նրան
հի-
է, հի-
իններ
նխիւդ
թիւն
աւուծ-
նաւ
թոյլ
տեղ
կատա-
պաշտ-
ոհերից
գաղա-
կա-
գիւղե-
անձին
նում է
ինկ
վորա-
կարա-
հար-
չ, չա-
կարո-
ում է,
նարը,
ման,
մեռ-
մասին
անան-
րներ
է, մի
է ծե-
ծում,
լիժում
ոչ ոք
լիք վրա
պա-
տ շա-
ն պա-
դիսա-
ան-
աղու
նրանց
ան
ին
աւս-
մովց
գրա-
րիսա-
մի
զու-
րինն
ամար
ն: Ու-

ստեփան ամենօրեայ և ձրի է: Դասընթացները
յաճախում են մօտ 50 հոգի, որոնց մեծամաս-
նութիւնը թուրքեր են: Պարագլուխները
տնում են երկու ժամ 6—8: Յանկալի է սուլը-
նել և թուրքերէն լեզուի դասերը:
Հայոց եկեղեցական-ծխական դպրոցի վի-
ճակը շնորհիւ երէցփոխ Աւետիս Մարտիրոս-
եանի եռամսեայ ջանքերի այս տարի ապա-
հոված է: Դպրոցը վճոված էր փակել զեռ ևս
անցեալ տարի, սակայն պ. Մարտիրոսեան
խղճաց 60—70 հոգի բացառապէս հայ երկու-
սեան երեխաներին, որոնք պէտք է փողոց
նետովէին և զուրկ մնային մայրենի լեզուի
տարբերակ գիտելիքներից: Դպրոցի համար
պ. Մարտիրոսեան Աստաթաշանում հաւաքեց
145 ռուբլի: Բազմաթիւ պ. Մարգարի Յով-
հաննիսեան ի յիշատակ իր հանգուցեալ ծնողի-
նուրից դպրոցին 50 ռուբլի: Այստեղի վա-
ճառականները՝ Յ. և Ե. Գրիգորեաններ՝ խոս-
տացել են նուրիւր դպրոցին 50 ռուբլի իրանց
հանգուցեալ եղբոր յիշատակին: Յունվարի
5-ին էլ երէցփոխ Մարտիրոսեան ծխական
դպրոցի ուսուցչի և ուրիշ երկու երիտասարդ-
ների հետ «Աւետիս» ման եկաւ յօգուտ դըպ-
րոցի: Հաւաքվեց 57 ռուբլի: Հասարակութիւ-
նը սիրով ընդունեց «Աւետիս» ման եկողնե-
րին:
Դպրոցաւոր մանկեղեցական ազգաբնակի-
ւթեան մէջ գաղութ հաստատած փոքրթիւ
հայ ազգաբնակիւթիւնը, բաղկացած մօտ 100
անից, շատ առում է եկեղեցուց: Կիրակի օ-
րերը եկեղեցում պատարագին ներկայ է գտն-
վում 5—10 մարդ: Կանայք և օրերը զինչ չեն
յաճախում եկեղեցի, բացի մեծ տօն օրերից,
մինչդեռ հայ կինը ուրիշ տեղերում յայտնի
է իր աւանդապաշ ջերմեանը: Ժո-
ղովրդին այս պակասութեան համար սաստիկ
յանդիմանութիւն կարգաց թեմական առաջ-
նորդի, երբ անցեալ տարի եկել էր Ղուբա իր
հօտի այցելութեան, սակայն նրա խօսքերը
մնացին ձայն բառաւոր յանապատի: Կիրակի
օրերը եկեղեցում երգում է ծխական դպրոցի
աշակերտները միաձայն խումբը: Յանկալի է,
որ Ղուբայի հասարակութիւնը ուղիք այս պա-
կասութիւնը և սկէ կիրակի օրերը եկեղեցի
յաճախել, եթէ ոչ ջերմեանը: Երբ զրդ
ված, գոնէ միապաղաղ՝ տաղակալի կենաքը
փոխելու:
Ղուբան հեռացած է Վաղեկավազեան եր-
կաթուղու գծից 28 վերստով: Զանապարհը
հասարակ է: Զը նայելով այդ փոքր տարա-
ծութեան, այստեղից մինչև երկաթուղու խաչ-
մաղ կայարանը շատ դժուար է գնալ, մանա-
ւանդ ցեխերի ժամանակ, որոնք յատուկ են
Ղուբայի խոնավ կլիմային: Մինչև խաչմաղ գնա-
լու համար երբեմն հարկաւորվում է 6—8
ժամ: Այժմ լուր կայ, որ կառավարութիւնը
ուղում է խնդրի անցկացնել այդ ճանապար-
հով ներկայ տարվայ գարունից:
N. N.

ՆԱՄԱԿ ԵՒ ՊԱՏՈՒՄԻՆԻՑ

Յունվարի 5-ին

Եւպատորիան իր ծովային լողաբաններով,
Մոյնակի բուժիչ տիղմերով և ընդհանրապէս
չոր ու առողջ կլիմայով սրանից 12—14 տարի
առաջ հաղել թէ յայտնի էր Ռուսաստանի
տանները մասին: Այժմ արդէն այստեղ
գալիս են հիւանդներ Ռուսաստանի ամեն կող-
մերից: Այն ինչ մի ժամանակ բժշկվելու ե-
կողները թիւը հազիւ հասնում էր տարեկան
2—3 հազարի, այժմ բարձրացել է 7—8 հա-
զարի: Ունի 20 հազարից աւելի բնակիչ:
Եւպատորիան յայտնի է և որպէս բաւական
նին գործունեայ վաճառաւոր քաղաք, շնոր-
հիւ իր նաւահանգստի: Այսպէս՝ ներկայ տար-
վայ յունվարից մինչև հոկտեմբերի մէկը ար-
տասանման է հանվել 121/4 միլիոն պուլը ապ-
րանք, գլխաւորապէս հացահատիկ: Իսկ ար-
տասանմանից ներմուծվել է շատ քիչ՝ միայն
600 հազար պուլը: Համեմատելով նախկին տա-
րիների էկսպորտը ներկայ տարվայ հետ, եզ-
րակացվում է, թէ նա քանի գնում աճում է:
Նոյնպէս աճում է ներմուծումը: Այսպէս 1899
թ-ին արտասանմանից եկել է մօտ 259 1/2 հա-
զար պուլը ապրանք, իսկ 1903 թ-ին՝ 466 1/2
հազար:
Եւ զրա համար զուր չեն եւպատորիաների
երազանքները՝ մի օր նա անհնգիստ (պօրտ)
ունենալ: Սրա անհրաժեշտութիւնը ճանաչված
էր արդէն, առևտրական ծովագնացութեան և
նաւահանգիստների գլխաւոր վարչութեան կող-
մից: Եւպատորիայի պօրտի շինվելը հերթա-
կան խնդիր էր, սակայն ներկայ պատերազմը

արգելք եղաւ նրա իրագործման:
Եւպատորիան Ղրիմի հայաբնակ քաղաքնե-
րից մէկն է զեռ թաթարների տիրապետու-
թեան ժամանակներից: Այժմ այստեղ ապրում
են 135 այր և 116 կին (251 հոգի). գաւա-
ռւն էլ ապրում են 106 այր և 71 կին (177
հոգի): Ունեն եկեղեցի և սրան կից՝ դպրոց
(13 աշակերտ):
Օրեսայի, Սիմֆերոպոլի և Սևաստապոլի
մերձաւորութիւնը որոշ կնիք է դրել հայերի
վրա. կարող ենք բախտաւոր համարել նրանց,
որովհետև չեն տեսնվում այստեղ այն աղա-
ները, որոնցից զերծ չէ նոյն իսկ Սիմֆերո-
պոլը և որոնց ձեռքին խեղդված է Հին-Ղրիմը:
Երիտասարդութիւն կայ, որ չի ծուլանում.
սովորութիւն է դարձած տարին գոնէ մի ան-
գամ հայերէն ներկայացում տալ: Զուրյա-
նում ենք աւելի խօսելուց: Միայն՝ ցանկալի
էր, որ տեղացի երիտասարդներն աւելի սերտ
կապերով միանային միմեանց հետ և չը բա-
ւականանային իրանց արածովը:
Հաթ.

ՆԱՄԱԿ ԵՒ ՊԱՏՈՒՄԻՆԻՑ

Թիֆլիս, դեկտեմբերի 28-ին

Այս նամակով ուղարկում ենք յարգելի
խմբագրութեանը տալը (10 ր.) ռուբլի, որ
առաջիկայ 1905 թ. յունվարի մէկից «Մշակ»
լրագրի մի օրինակը ուղարկէք Մարմատ գա-
ւառի Մարամբերիկ գիւղի հայ հասարակութեա-
նը, որը հանգանակվել է հետեւեալ երիտա-
սարդների մէջ. 1) Եղիա Յակովբեանց (սարա-
մբերիկից) 2 ռուբլի 50 կ., 2) Աւետիս Նոր-
հայեանց, 3) Մարտիրոս Մարտիրոսեանց, 4)
Վարդան Սահակեանց, 5) Արզաւր Սափարեանց
(սարամբերիկից), 6) Աւագ Մամիկոնեանց
(ղալապարից), 7) Աստուածատուր Տէր-Գրի-
գորեանց (փայեաշուկից) 1-ական ռուբլի: 8)
Սողոմոն Բուդաղեանց (սարամբերիկից), 9) Աս-
լան Պողոսեանց և 10) Յովակիմ Յովէֆեանց
(ուկանցից) 50-ական կոպէկ: Ընդամենը տա-
լը ռուբլի, և աւելորդ չենք համարում հրա-
պարակով յայտնել վերոյիշեալ երիտասարդ-
ների մեր շնորհակալութիւնը, որոնք ի-
րանց նուէրներով հայ թիֆլիս ստանալու բախ-
տին արժանացրին Պարսկաստանի մի խուլ
անկիւնում ընկած Մարամբերիկ գիւղացուն,
այն էլ մեր ամենքիս պաշտելի և գիւղացու
պաշտպան «Մշակին»:
Եղիա Յակովբեանց
Աւետիս Նորհայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Երէկ, յունվարի 15-ին, Ամենայն Հայոց Վե-
հափառ Կաթողիկոս Մկրտիչ I-ի տօնը լինե-
լով, Վանքի մայր եկեղեցում հանդիսաւոր
պատարագ մատուցվեց, որին ներկայ էր ա-
հազին հասարակութիւն: Նորին Վեհափառու-
թեան տօնը շնորհաւորելու եկել էին թէ հո-
գեորական դասը, թէ Ներսիսեան դպրոցի
վարչութիւնը ու հոգաբարձութիւնը և թէ հա-
սարակութիւնից բազմաթիւ անձեր:

«Մշակի» այսօրվայ համարը հեռագրիւնների
շատութեան պատճառով բազկացած է 1 1/2
թերթից:

«Բ. Բ.» լրագրի հաղորդում է հետեւեալ
մանրամասնութիւնները յունվարի 6 ին Պե-
տերբուրգում պատահած դէպքի մասին: «Երբ
Անտօնիս միտրօպօլիտը կատարում էր ջրօր-
հնէրի հանգէսը, և հրափամփուշտի ազդա-
նանի համաձայն, խաչը ջուրը գցելու ժամա-
նակ որոտացին թնդանութիւնները, թնդանութ-
իւնների մէկի վառօդի մէջ երևան եկան հին ձեկ
մի քանի փամփուշտներ գնդակով, որոնք ար-
ձակվելով, թռան անցան Նեկայի վրայով,
փչեցին Յորդանանի շէնքի մի մասը, կպան
Ձեռնային պալատի դրանը և սրենքեր, թող-
նելով նրանց վրա նշմարելի հետքեր: Մի
գնդակ ծակեց ծովային կորպուսի բոլորակը,
վերաւորեց մի ոստիկանի, երկու գնդակ ծա-
կեցին Նիկոլայովիկի դահլիճի վերին ապակի-
ները և մտան դահլիճը, ընկնելով պատերի
առաջը: Մի ականատես գրում է Մոնդեանին:
հանդէսն արդէն մօտենում էր վախճանին:
Ինքնակալ Կայսրը, առկէց փայլուն զգեստ-
ներով հոգեւորականութիւնը, խաչվառները, մօ-
տեցաւ Յորդանանին, ուր խիտ առ խիտ
կանգնած էին կիսաշրջանաձև նրա գնդերի
դրօշակները: Կատարվեց մի կարճ աղօթարա-
րութիւն: Վերջացաւ ջրի օրհնութիւնը: Միտ-
րօպօլիտը կոխում է խաչը ջրի մէջ. թնդա-
նութիւնը որոտն սկսվում է: Եւ, ուրիշ շատե-
րի հետ միասին, նայում են Նիկոլայովիկի
դահլիճի լուսամուտից: Անա հնչեց առաջին
հարուածը, որ թնդաց Պալատի փառահեղ դահ-

լիճի կամարների տակ. որոտաց երկրորդը և
յանկարծ կոտորվող ապակու և պատին կպչող
ու վայր ընկնող առարկայի մի բուժ ձայն
գրաւեց մեր ուշադրութիւնը, խօսակցութիւն-
ները դադարեցին: Դահլիճում գտան կարտեզի
գնդակ: Ակամայ ընկանք դէպի լուսամուտնե-
րը: Հանդէսը շարունակվում էր սովորական
ձևով: Զգվեց վերադարձի թափօրը. բոլոր
գրօթակներն անցկացան Նորին Մեծութեան
առջևից: Յետոյ լսեցինք, որ Նորին Մեծու-
թեան յորդանանում եղած ժամանակ, մի
գնդակ կպել է յորդանանի շէնքին:
Յունվարի 8 ին Պետերբուրգում «Нов. Вре-
мя» լրագրի խմբագրութեան մէջ կայացել է
խմբագրիւնների և հրատարակիչների ժողով, որ
ընկնել է բանւորների գործադուլից առաջացած
վիճակը: Ժողովին մասնակցում էին և տպա-
րանական բանւորների ներկայացուցիչները:
Պարզվեց, որ գործադուլը անսպասելի է եղել
և երկու կողմն էլ անպատրաստ են եղել այդ
բանին: Բանւորների ներկայացուցիչները պա-
հանջում էին գլխաւորապէս վարձի աւելա-
ցում. յայտնեցին նոյնպէս, որ տպարանական
բանւորներն իսկոյն աշխատել էին սկսին,
եթէ հրատարակիչները կը համաձայնեին 1000
տոն շարվածքի համար մինչև 20 կօպէկ գին
նշանակել: Բայց մի և նոյն ժամանակում ժո-
ղովրդական Տան մէջ տեղի ունէր գործարա-
նական և տպարանական բանւորներից մի քա-
նիսի միջև խորհրդակցութիւն: Այդ տեղ
մշակվեցին բոլոր բանւորների համար ընդհա-
նուր պահանջներ: Բայց «Բ. Բ.» շէնքում ե-
ղած ժողովին մասնակցող բանւորական ներ-
կայացուցիչներն այդ չէին իմանում: Ժողովը
ոչ մի եզրակացութեան չը հասաւ և դրու-
թիւնը բոլորովին չը պարզվեց: «Վարը, յուն-
վարի 9-ին, առում է «Բ. Բ.» թղթակիցը,
բանւորները կը ներկայացնեն հրատարակիչ-
ներին իրանց վերջնական պատճառաբանված
պահանջները՝ ցերեկվայ ժամը 12-ին: Ժամը
3 ին կը հաւաքվեն հրատարակիչները իրանց
գործունէութեան եղանակը պարզելու: Հրա-
տարակիչները պարտադրվեցին ոչ մի միջոցի
չը գիտելու մինչև վաղը լրագրի լոյս ընծայե-
լու համար:
«Բ. Բ.»-ին հաղորդում են մի քանի տեղե-
կութիւններ: Գալոս բանայի մասին, որի
անունը մի քանի անգամ յիշվեց Պետերբուր-
գից ստացված հեռագրիւններով՝ իբրև բանւոր-
ների շարժմանը ջերմ մասնակից և գլխաւոր:
Հայր Գալոսին յանձնարարել է 3 տարի ա-
ռաջ արդարադատութեան մինիստրութեանը՝
Պետերբուրգի և Լադօգայի միտրօպօլիտը,
ստանձնելու փոխադրական բանտի բանայի
պաշտօնը: Մի քանի տարի առաջ նա զբաղ-
վեց բանւորների վիճակի ուսումնասիրու-
թեամբ, գլխաւորապէս Պուտիլովի գործարա-
նում: Հետաքրքրվելով բանւորների կենսքով,
նա այցելում էր նրանց տները և ուժերը նե-
րածին չափ յաճախ նրանց օգնութեան էր հաս-
նում նեղ վիճակում: Առանձին ուշադրու-
թիւն էր դարձնում նա բանւորների երեխա-
ների վրա, ծնողներին ներշնչելով սալ նրանց
գոնէ որ և է կրթութիւն: Երբ հայր Գալոսը
նկատում էր անարդար վերաբերմունք դէպի
բանւորները, ամեն անգամ առանձին-առանձին
գործերի համար միջնորդ էր հանդիսանում
գործարանի վարչութեան առաջ, նոյնպէս և
յաճախ միջնորդ էր հանդիսանում և խնդրում
բանւորների համար Պետերբուրգի քաղաքա-
պետին: Բանւորները դիմում էին հայր Գա-
լոսին ոչ միայն գործարանների գործերի ա-
ռիթով, այլ և իրանց մէջ ծագած ընկերական
կռիւնները ընկնելու և ուրիշ բաների համար:
Յաճախ նա խաղաղաբար էր հանդիսանում,
երբ բանւորական ընտանիքներում անհամա-
ձայնութիւններ էին ծագում: Առանձնապէս
եռանդով նա ժարտնչում էր հարեցողութեան
դէմ բանւորների մէջ, վարժեցնելով նրանց
ընկերացանութեան, ընկերական ժողովների և
սան անհալ ընկերական խօսակցութիւնների:
Սովորաբար լավեկաց, արաւաքուստ խիտ
կերպարանք ունենալով, նա միաժամանակ և
շատ լաւ քարոզիչ, գեղեցիկ ճարտասան և
բաղձակողմանի զարգացած մարդ է: Նա մի
քանի անգամ ստիպված է եղել դուրս գալ
փոխադան հոգեւոր դպրոցներից հակառակ իր
զիտէր և ուս հարկն է չէր հնազանդվում:
Բայց, դրա հետ միասին, հոգեւոր վարչու-
թիւնն, ի նկատի ունենալով նրա աչքի ընկ-
նող ընդունակութիւնները, հաշտվում էր «ան-
հանգիստ» հայր Գալոսին հետ, և վերջ ի վեր-

ջոյ նա հնարաւորութիւն ունեցաւ աւարտելու
ոչ միայն միջնակարգ, այլ և բարձրագոյն
հոգեւոր դպրոց կամ ակադէմիան: Նրա հայրը
մի հասարակ գիւղացի է: Հայր Գալոսն այժմ
35 տարեկան է:
Մենք ստացանք Մօսկվայում հրատարակ-
ված մի նոր ուսերէն գիրք «Բաղաբացիա-
կան թախիծի երգիչը» (Пѣвецъ таѣжеской
сѣорбѣ) վերնագրով, որ պարունակում է հայ
բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանի 33 ըն-
տիր ոտանաւորների ուսերէն թարգմանու-
թիւնը, կատարված 11 անձերի, այն է Իվ.
Բէլոուսովի, Իւրի Վեսելովսկու, Գ. Գալինայի,
Ապ. Կօրինֆուկու, Ն. Միրաբեանի, Մ. Մի-
նչևէկի, Ե. Նեչաէկի, Գ. Պազդիկի, Ս.
Պետրոսեան-Եաբլոնսկու, Լէվ Ուսանցի և Բ.
Շկուլէվի ձեռքով: Ներածական յօդուածը գը-
րել է Առաքել Դէրվիշ: Գիրքը պարունակում
է բանաստեղծի կենդանագրքը, մանրամասն
պատկերը նուիրված է Գէորգ Գանսեանի
յիշատակին և տպագրված է գեղեցիկ թղթի
վրա ու վերին աստիճանի խնամքով: Գինն է
80 կօպէկ:
Ստացանք Բալախանի նաւթային Յ. Մ.
Տէր-Յակովբեան ընկերութեան ծառայողնե-
րից 10 ռուբլի իրանց նախկին ընկեր և ըն-
կերութեան գրասենակապետ Նախիլեան բնա-
կիչ հանգուցեալ Կարապետ Ներսիսեան Տէր-
Յակովբեանի յիշատակին ուղարկելու «Մշակի»
մի օրինակ մի որ և իցէ տեղ, ուր աւելի կա-
րել է զգացվում:
Յունվարի 14-ին Թիֆլիսի նախագահական
դատարանում ընկնում էր եղբայր Բօգարջեան-
ների նախկին գլխաւոր գործակաւոր Նիկո-
լայոս Սահակեանի գործը: Վերջինս մեղադր-
վում էր Յովհաննէս Բօգարջեանի վրա կան-
խամածված սպանութեան փորձ անելու հա-
մար: Պրօկուրորի օգնական ծօն Կլուգէնը
պահանջում էր դատապարտել մեղադրեալին
այդ յանցանքի համար տաժանակիր աշխա-
տանքների՝ չորս տարի ժամանակով: Մեղա-
գրեալը պաշտպան երդուեալ հաւատարմատար
Տիգրան Յովհաննիսեան աշխատելով ապացու-
ցանի, որ Սահակեան անմեղ է, որովհետև
առթանակել արձակել է օդի մէջ, եղբայր Բօ-
գարջեաններին վախեցնելու համար, խնդրում
էր կամ արդարացի մեղադրեալին կամ մե-
ղաւոր ճանաչել նրան ոչ թէ կանխամտածված
սպանութեան, այլ զրգուշացնող գրութեան մէջ
կատարված սպանութեան փորձի մէջ: Դատա-
րանը միջոց չեալ թողնելով յունվարի 15-ին և,
մեղաւոր ճանաչելով Սահակեանին զրգուշաց-
նողութեան մէջ սպանութեան փորձ անելու
համար, դատապարտեց նրան կալանաւորական
բաժանմունքների՝ ուժ ամիս ժամանակով:
Ինչպէս լսել է «Բ. Բ.» լրագրից, արդարա-
դատութեան մինիստր է նշանակվում մինիստրի
օգնական գաղտնի խորհրդական Մանուիլին:
Լուր կայ, որ պետական քարտուղար Մուրա-
վիովը նշանակվում է Հոսում գնապան:
Մինիստրների կօմիտէտում աղանդաւորնե-
րի գործերը ընկնելու ժամանակ, ինչպէս լսել
է «Բ. Բ.» լրագրից, նշանակվում են սիւնդի-
զիստը պրօկուրոր Գ. Պ. Պօբեդոնօսցիվը,
Անտօնիոս միտրօպօլիտը և սենատոր Տադան-
ցիվը:
Մի քանի լրագրիւնների տեղեկութիւններ
համեմատ, փետրվարի կաղվելիք համաժո-
ղով, որ կազմելու էին բոլոր Ռուսաստանի
քաղաքագլուխները և ինքնավարութիւնների
ներկայացուցիչները, չէ կայանալու: Այդ
հարցը դեռ միայն ընկնելու է այս տարվայ
մարտ ամսի վերջին:
1905 թ-ի համար զգալի կերպով կրճատված
են Պետերբուրգի և Մօսկվայի Կայսերական
թատրոնների ծախքերը:
Երկրագործութեան մինիստրութիւնը վճել
է մեծ ուշադրութիւն դարձնել Ռուսաստանի
բամբակաւորութեան վրա: Նա սյղ նպատա-
ունենալ: Սրա անհրաժեշտութիւնը ճանաչված
էր արդէն, առևտրական ծովագնացութեան և
նաւահանգիստների գլխաւոր վարչութեան կող-
մից: Եւպատորիայի պօրտի շինվելը հերթա-
կան խնդիր էր, սակայն ներկայ պատերազմը

«СЛОБО» հաղորդում է, որ արտաքին գոր-

ծերի մինիստրութեան մէջ ստացվում են բազմաթիւ յայտարարութիւններ այն անձե-
րից, որոնք ունենան անշարժ կամ շարժական
սեփականութիւններ Պօրտ-Արտուրում: Դրանք
բոլորն էլ վարձատրութիւն են պահանջում
կրած ֆուսաների համար. նոյնպիսի խնդիրներ
են ստացվում և Հեռաւոր Արեւելքի փոխար
բայի դիւանում:

Յունվարի 6-ին, ֆինանսների մինիստրու-
թեան մէջ կայացաւ մինիստրի նախագահու-
թեամբ, խորհրդակցութիւն հերկայացուցիչ-
ների և գործարանական վերատեսուչների:
Խորհրդակցութեան նիւթն էր Պոստիւլովի, Նե-
վայի նաւաշինարանների և Պետերբուրգի այլ
գործարանների բանուորների գործադուլի ա-
ռաջացրած հարցերը:

Բազուի բանուորների գործադուլի ժամանակ
Կազանի բօրսայի ընկերութիւնը մի հեռագիր
էր ուղարկել ֆինանսների մինիստրութեան և
խնդրել, որ անյապաղ միջոցներ ձեռք առնվեն
փարատելու թուրքացութիւնները բանուոր-
ների և նաւթարդէնարներու դրոշմի միջև: Հե-
ռագրի մէջ բօրսայի ընկերութիւնը բացատրել
էր, որ այժմ գործարաններում և նաւագնա-
ցութեան մէջ տարեկան 320 միլիոն պուղ
նաւթ է գործածվում իրը վառելիք: Բազուի
անկարգութիւնները, դադարեցնելով նաւթի
արդիւնահանութիւնը, ահագին աղէտ են ըս-
պաւնում ոչ միայն Վոլգայի ափերի ար-
դիւնագործութեանը, այլ և Սոսկովայի ամբողջ
գործարանական շրջանին: Նաւթի բիւջէի գալով
դէպի Վոլգայի ափերը, նաւթի գինն արագու-
թեամբ կը բարձրանայ, իսկ այդ կը սեան-
կացնէ բոլոր գործարաններին և նաւերի տե-
րերին: Այդ, որքան կուտուրան առաջ է
գնում, այնքան աւելի արդիւնագործութեան
մի ձեւով սեր կապվում է միւսին հետ, այն-
քան աւելի մի դառաւարդ է կարողանում
ապրել առանց միւսի օգնութեան:

Արդարադատութեան մինիստր Մուրավիովը
կարծիք է յայտնել, որ պէտք է երգուեալների
դատարան մտցնել այն շրջաններում, ուր
ժողովուրդը բաւական պատրաստված է այդ
պաշտօնը վարելու համար: Արդարադատու-
թեան մինիստրութեան մէջ արդէն հաջորդ
նիւթեր են հաւաքված: Այդ նոյն առթիւով
Կովկասի և մի քանի ուրիշ տեղերի շրջանների
անդալական դատարան բարձր պաշտօնեաները
նոյնպէս կարծիք են յայտնել, որ պէտք է և
ժամանակն է այդ հաստատութիւնը մտցնել
Կովկասում, Սիբիրի, Թուրքեստանի և այլ
տեղերի մի քանի նահանգներում: Դրա հետ
միասին հերթական հարց է դառել քաղաքա-
յին դատարանները դարձնել ընտրողական և
հիմը կայ կարծելու, առում է «P. B.», որ
հաշտարար դատարանութիւնը կը վերա-
կանգնվի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՅԻՆ ԵՈՒՐՁԻ

Արաւաճի պատրաստութիւններ: Ռուսաց
գլխաւոր հրամանատարը բանակում արշաւան-
քի պատրաստութիւններ են տեսնում: Լօնդո-
նից «Berl. Tageb.» լրագրին հետազոտում են
թէ հապոնական ձախ թիւն հիմ սկսվում է
ռուսաց զօրքերի կենտրոնացումը: Այստեղ հա-
ւաքված են 8-րորդ և 16-րորդ զինուորական
կորպուսները, 1, 2 և 5 հրացանաձիգ բրիգա-
դաները: Գնալի որ չեն եկել հապոնական զօր-
քերը Պօրտ-Արտուրի մօտից, գնալի որ չեն
պատկերի բանակի նշանաւոր չա-
փով ուժեղ է մարշալ Օյաւայի բանակից, ուս-
ները ունեն 340 բաւալիս, հապոնացիները—
220 (P. B.):

Պօրտ-Արտուրի անձնակազմը: «Բէյաթեր»
յատուկ թղթակիցը հաղորդում է Պօրտ-Ար-
տուրից. բերդի անձնակազմի նախաւորութեան
թիւնը արվից առաջին անգամ ղեկավարների
16-ին: Զինուորական խորհուրդում գնալի որ
Ստիսել կարծիք յայտնեց, որ պէտք է անձ-
նաւոր լինել, բայց մի քանի օֆիցէրներ
խիստ հակառակվեցին: Զինուորիկներն և նը-
րայի շարքերի մէջ գտնվող օֆիցէրներին չը
հարցրին: Նրանք այդ նորութիւնը իմացան
դիկտանտների 19-ին, երբ արդէն գնալի որ
Ստիսելը բանակցութիւններ էր սկսել հա-
պոնացիների հետ: Անձնակազմի հետեւած
տեսարանները տեղի կերպարանք ունեն: Հար-
քած զինուորները լցվեցին փողոցները և հրա-
ժարվում էին իրանց օֆիցերներին լսել: Նը
բանցից շատերը ոչնչացնում էին թնդանթ-

ները դերքերի վրա և քաղաք էին մտնում ա-
ռանց թողնուած: Հետեւի զօրքը աղվա-
լի կերպով բողբոլում էր դերքեր յանձնելու
դէմ: Զինուորները իրանց հրացանները և
ռումբերը շարժում էին ջրի մէջ և սկսում էին
կոտորատել խանութները և օդանոցները և օդի
խմբերն մինչև անգագայանալու աստիճան: Կա-
կած չը կայ, որ անձնակազմի մէջ անհրա-
ժեշտ էր, որովհետեւ բերդի մէջ գտնվում էին
խեղճաւոր ուժ կազմող 31 հազար մարդիկ:
Ռուսները քիչ էին, բայց նրանք զեռ բոլորու-
վին չէին սպառնալ. կերակուրը թէ և վատ էր,
բայց մասնաւոր պահեստները զեռ չէին հն-
թարկվել գրաւման: Այժմ ոչ մի դժուարու-
թիւն չը կայ քաղաքի մասնաւոր խանութնե-
րում մի քանիսն: Իրապէս բերդը կորող էր
զեռ ամիսներ պահվել: Զօրքերի ոգին գեղե-
ցիկ էր, և զինուորները լցված էին մինչև
վերջը կուռնու փճաւորութեամբ: Գնալի որ
Ստիսելին աստիճակ կշտաւորում են, որ նա
այդպիսի տեսլի վերջ տուցի փայլուն պաշտ-
պանութեան, որ իսկապէս զաղարեց գնալի որ
Կոնստանտնուպոլի պաշտութիւնից յետոյ: Այս
վերջինը զինուորներից սերված էր և կազմում
էր պաշտպանութեան հոգին: (Рыб)

2-րորդ հսկայաբան: «Matin» լրագիրը կա-
տարեւրագէտ լաւագործակ աղբիւրից իմացել է
որ երկրորդ հսկայաբանի առաւելին բաժնիները
ամենայն աշողութեամբ միացել են իրար հետ
Մադագասկար կղզու մօտ: Ֆրանսիական լրա-
գիրները հաղորդում են, որ ռուսաց ծովագե-
տութիւնը ընդուն է այն հարցը, թէ ինչպէս
պէտք է անել որ ծովագետ Բոսնիայի միջին
կողմից հսկայական Ուկրաինայում, չը խանդարե-
լով Ֆրանսիայի չէզոքութիւնը: «Temps» լը-
րագիրը կարծիք է յայտնում, որ ծովագետ
Բոսնիայի միջին կողմից վրա դրած յանձնարարութիւ-
նը չէ կարող կատարված լինել, չը նայած
ռուս ծովագետի բոլոր արժանաւորութիւն-
ներին: Միակ հնարաւոր էր, որ կը համա-
պատասխանէր Ռուսաստանի շահերին—գա-
հակադրան յետ կանչելն է: (Рыб)

ՆԱՄԱԿ ԼԱՅՊՈՒԳԻՏ

Յունվարի 2-ին

Պարզի յայտնի փորձական բժիշկ Ալեք-
Սանդրի նորքս բժշկութեան մէջ մի խոշոր
տարր ևս մտցրեց, որը իր նշանակալից լի-
նելուն պատճառով կայանի արագութեամբ
տարածվեց բոլոր կուտուրական երկրներում:

Ռոգին գիտել աւելի անտեսական՝ քան
բժշկական նշանակութիւն ունի. ամենքին
յայտնի է այսօր, որ թրքախոր, շլային հի-
ւանդութիւնների շատ և շատ տեսակները բը-
ժշկելի են, եթէ հիւանդութիւնը որոշ շրջա-
նից չէ անցել. բայց և այն ևս յայտնի է, որ
նիւթական այն ապահովութիւնը, որին քան
կարելի ունի այդ տեսակի հիւանդութիւն-
ունեցող իւրաքանչիւր այն մարդ, շատ քիչ-
քիչ է վերապահված: Իսկ այդ տեսակ ա-
պահով նիւթականի տէր անձնակազմութիւն-
ներն էլ հազուադէպ ղեկավարում են վերոյի-
շեալ հիւանդութիւնը ստանում:

Հասարակ դասակարգը, որը ենթակայ է
այդ հիւանդութիւններին, անկարող է բուժ-
վելու բոլոր նիւթականը հոգալ, այն է՝ շա-
ւաթներով ճանապարհներ կտրել, լեռների
կատարները բարձրանալ, սանատորիայի փող
վաճակ, լաւ ուտելիքի վաճակ և այլն:

Այնպէս որ մարդ կարծում է, որ այդ գիւ-
տեր արված են միայն գիտական արիւնների
մէջ արձանագրելու համար, առանց հասարա-
կութեան մի զգալի տոկոսին որ և է օգուտ
տալու համար:

Եւ անհ Բոգին օգապարիկի միջոցով ցան-
կանում է այդ բոլոր գիտարութիւնների ա-
ռաջն առած լինել:

Նա ունեցել է հարիւշաւոր թրքախորաւոր
հիւանդներ և զրանց օրական մի երկու ժաւ
օդի վերին շերտերում պատեցնելուց յետոյ
կարողացել է բուժել և մի քանի շաբաթվայ
մէջ նրանց թրքերը աւելի կաղաղելով, քան
թէ առաջ որ և է ժամանակ եղած են:

Բոգինը հաշու է, որ օգապարիկով պատե-
լուց յետոյ, հիւանդների թրքերը ընդունակ
են դառնում երկու անգամ աւելի օդ ներշնչել
քան առաջ և, որ ամենապիւտաւորն է, երկիր
իջնելուց յետոյ՝ շնչառութեան այդ կանոնա-
ւորումը մնայուն է դառնում:

Թէ մինչև որ աստիճան կարելի է բարձրաց-
նել հիւանդներին, դա կախված է հիւանդի
դրութիւնից. եթէ հիւանդութիւնը այնքան է
առաջ գնացել, որ շնչառութիւնը լիւստ ա-
րաջ կան դաժնալ է կատարվում, այդօրինակ
հիւանդներին ապարդիւն է օգապարիկի մէջ

վերցնել, քանի որ նրանք կը ֆուսկեն. ֆու-
սած դէպքերում որքան բարձր այնքան աւելի
օգտակար. և որովհետեւ օդի վերին շերտե-
րում թթուածին շատ քիչ կայ, Բոգին արեւս-
տօրէն թթուածին է եղել լցնելու օգապարիկի
մէջ:

Բոգին ոչ միայն հիւանդներին, այլ և ա-
ռողջներին ևս առաջարկում է յաճախ օդա-
պարիկով զբօսանքներ կատարել, որով նրանք
ընդմիջ ապահովված կը լինեն այդ հիւան-
դութիւններէ:

Բայց որ ամենազիջաւորն է, Բոգինի առա-
ջարկած միջոցը շատ արժան և մատչելի է
ամեն մի դասակարգի համար. թրքախորաւորը
այս ղեկավար կարելի չունի երկար ժամանակ
գործել թրքին, հարկներ ընտանիք թողնել,
այլ միայն օրական երկու ժամ մի հաճելի
զբօսանք կատարել:

Իսկ ինչ օգապարիկին է վերաբերվում, նա
թէ և թանկ է, բայց ի նկատի ունենալով վե-
րոյիշեալ բոլոր ծախսերը, շատ արժան է
գալով:

Եւ այսօր արդէն օգապարիկը կուտուրա-
կան երկրում մի հազուագիւտ բան չէ և ոչ
էլ անմատչելի հասարակ դասակարգի համար
նոյն իսկ այս գիւտից առաջ:

Իսկ մեր մէջ...

Դարեր են հարկաւոր. դարեր...

Օր. Ս. Արամեան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

14 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական Գնաւորաւ ա-
ղբաւորութիւններ հեռագիրը Նորին
Կայսերական Մեծութեան Անունով: 1) Ներ-
կայ տարվայ յունվարի 12-ից. «Ներկայ թիւն
մեր աշխարհի սկսեց արշաւանք հակառա-
կորդի դէպքի դէմ: Առաւօտեան ստանաւ-
նիքը 16 աստիճան էր: Վերոգրեալի մասին
ամենհպատակութեամբ կը կողմնակցում եմ Ձեր
Կայսերական Մեծութեանը»: 2) «Առ այժմ եւ
ստացել եմ զեկուցում այն մասին, որ մենք
տիրել ենք ինքապաշտպան և ինքապաշտպան
գիւղերին. վերջինը գտնվում է 7 վերստ դէպի
հարաւ-արեւմուտք Սանդակուրից: Վերոգրեալի
մասին ամենհպատակութեամբ կը կողմնակցում եմ
Ձեր Կայսերական Մեծութեանը»: 3) Ներկայ
տարվայ յունվարի 13-ից. ձիւղ տեղեկութիւն-
ներ դեռ ևս չեն ստացված կորուստների մա-
սին ինքապաշտպան և ինքապաշտպան գիւղերի
վրա. երեկ արած յարձակման ժամանակ
ինքապաշտպան գիւղը գրաւեց լուսաբա-
ցից առաջ առանց հրաձգութեան: Այստեղ հ-
ղած հապոնացիները խողովակները սուրին
ներով: ինքապաշտպան գիւղը հապոնացիները
յամարութեամբ պաշտպանում էին և վերջնա-
կանապէս գրաւեցինք մենք երկուստեան 10
ժամին: Մեր հեծելազօրքը երեկ գործ ունե-
ցաւ զբազանները երկու գիւղի հետ, որոնք
շտապով յետ նահանջեցին դէպի հարաւ-արե-
ւելք: Մեր բանակների ձախ թիւն վրա մեր
զօրաբաժնիները մէկը երեկ 6 վերստ հեռա-
ւորով դէպի հիւսիս ինքապաշտպաններից, յետ
միջոց հակառակորդին և նորից գրաւեց լեռն-
անցքը ինքապաշտպաններից դէպի Էրֆարդան
տանող ճանապարհի վրա: Մի ուրիշ զօրաբա-
ժին, որ ուղարկված էր դէպի Տիւրքոյէնի
հանդէպ գիւղերից բանակի թիւն, ստիպեց
յետ քաղախ հապոնացիների առաջապահ զօ-
րամասերին, որի ժամանակ զուգահեռ 200 գլուխ
տաւար: Վերոգրեալի մասին ամենհպատա-
կութեամբ կը կողմնակցում եմ Ձեր Կայսերական Մե-
ծութեանը:

ՏՈՒՐԻՆ, 12 յունվարի: Կառավարութիւնը
վճռեց իրազօրեւ ծովային ուժերը սեփական
լուսաբազմութեամբ: Անյապաղ կը սկսվի 19,000
տոնն ունեցող զրահակների և երկու կրէյսերնե-
րի կառուցումը: Բոլոր նաւերը խիստ պիւտա-
ւորված կը լինեն: Նշանաւոր թիւով կը մե-
ծացվի հակառակառակութեան և ակաւանաւե-
րի նաւաւորութեան: Այս տարվայ ընթացքում կը
հասցնվեն 15 ստորջրեայ նաւակներ: Նորից
բանակցութիւններ են սկսված չիլիական մի
կրէյսերի գնման մասին: Այդ նաւը հասցնելու
համար նշանակված է կիպրոս ճանապարհ ընկա-
նապահայից: Այդ բոլոր պատրաստութիւն-
ները գաղտնի են պահվում: Նաւաւորութիւն նա-
ւերի կարկառուութեամբ աւարտված է: Երեկ կրէյ-
սերներ, ծովագետ Միլամուրի հրամանատա-
րութեան տակ, գտնվում են Բօրնէօի շրջա-
կաններում: Կրէյսերեան հակադրան գնում է
դէպի հարաւ: Ի նկատի ունենալով այն, որ
ծովագետ Տօգօ ներկայումս հիւանդ է, զրա-

հակերները կը հետեւն կրէյսերներին Կաւի-
մուրայի հրամանատարութեամբ: Ի-ին կարգի
երեք կրէյսերներ երթնելու են Սանգարեան
ջրանցքի մօտ, երեք ոչ զրահապատ կրէյսեր-
ներ չինական նաւիկին զրահակների հետ միա-
սին, որպէս ծովագետական նաւ, պաշտպա-
նում են Տուրքիայի ջրանցքը: Սպասվում
է Վլադիվոստոկի պաշարման յայտարարու-
թիւնը: Ֆորմալայի վրա ափ են իջեցը-
ված զօրքեր և զօրեղացիներ են ամբողջութե-
ամբ: Ակնհեր է, որ խորտակվել է 2-դ կար-
գի մի կրէյսեր: Նոր կապակերպովող հապո-
նական հիւանդները բանակը կը գտնվի գնե-
րալ Կաւիմուրայի հրամանատարութեան տակ:
—Նօգիլ ամբողջ բանակը այս ամս այ վեր-
ջը կը միանայ Օյաւայի բանակի հետ:
Այդ զօրքերը, կարճատև հանգստութեան շնոր-
հիւ, գեղեցիկ դրութեան մէջ են գտնվում:—
Սասեբում հիւանդանոցներ են շինվում:—
Տօկիոյում գտնվում են 30,000 վերաւորներ,
որոնց մեծամասնութիւնը Պօրտ-Արտուրից են:
Նօգիլ շտաբի հրամանատարը յայտնում է,
որ հապոնացիները, Բարձր սարը գրաւելու
ժամանակ, կորցրին 25,000 սպանվածներ և
վերաւորներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կառավարիչ սենատի կար-
գադիւն նիստում այսօր ընկեց Սախալինի
բանտի վերակառու Ֆելդմանի գործը, որը մե-
ղադրում էր Դօրոշիւիչին զրպարտութեան մէջ
մամուլի միջոցով: Այդ գործը իր ժամանակ
վիճարանութիւններ յարուցեց ամբողջ մէջ:
Նահանգական դատարանը և պալատը արդա-
ւաբար Դօրոշիւիչին: Սենատը առանց հետե-
ւանքների թողեց Ֆելդմանի գանգաւոր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական Գնաւորաւ ա-
ղբաւորութիւններ ամենհպատակ հե-
ռագիրները Նորին Կայսերական Մեծութեան
Անունով: 1) Ներկայ տարվայ յունվարի 13-ից.
«Յունվարի 12-ի ընթացքում ստացված զեկու-
ցումներից պարզվեց, որ ինքապաշտպան տիրե-
լու համար զօրքերը ստիպված էին յամառ
կուռի դիմանալ: Այդ գիւղի մօտ ամբարցված
զէրքը վերջինից երկուստեան մօտ 11 ժամին:
Երեկ, յունվարի 12-ին, նախապէս ստացված
տեղեկութիւնները համեմատ, ինքապաշտպան
Տուրքոյէնի և ինքապաշտպան գիւղերը տիրելու
ժամանակ, մենք վերջինք մօտ 100 գերիներ:
Մենք տիրեցինք նոյնպէս Զիտայցի գիւղին
իւրեք ժամի վրա 50 զինուորների կորցնելով: Այ-
սօր, յունվարի 13-ին, մեր զօրքերը գործո-
ղութիւնները կայանում էին նրա մէջ,
որ նրանք շարունակում էին արշաւանքը դե-
պի Սանդակուր: Բանակի ֆիւսցած ճակատի
վրա վճռական ընդհարումներ տեղի չունեցան,
բացի Սախալինի գիւղից տեղի ունեցած յար-
ձակումից, որը վերջացաւ թշուառ արեւու-
թիւնը գրաւելով: Նապոնացիների փորձերը՝
զուրա բռն մեզ մեր գրաւած գիւղերից՝ աշողու-
թիւն չունեցան: Ժամը 4 և 35 րօպէին ստաց-
ված զեկուցումն համեմատ հապոնական զօր-
քերը ցուց տուին առաջնապետութիւնը հարաւ-
արեւելքից դէպի Սանդակուր: 2) 1905 թիւ
յունվարի 14-ից. «Գիւղերայ ընթացքում
ստացված զեկուցումների համաձայն՝ հապո-
նացիները հակառակառակութեամբ մեր զօրքերի վրա,
որոնք երեկ Սանդակուրի մօտից իրեքի վրա
զորո՞ էին տուել, յետ է մղված: Մեր հեծելա-
զօրը մասնակցութիւն է ունեցել այդ հակա-
ռակառակութեամբ յետ մղելու գործում, գործելով
հապոնացիների ձախ թիւն և մասամբ թիւնե-
քի դէմ: Դրանից յետոյ մեր զօրքերը շարու-
նակեցին գործողութիւնները Սանդակուրի մօտ
ամբարցած գիւղերի դէմ: Երկուստեան ժամը
7-ին, յամառ ճակատամարտից յետոյ, մեր
զօրքերը, սպառնալիքի օգնութեամբ յաղթելով
բոլոր արեւստական արեւելքներին, ներս խու-
ժեցին ընդարձակ, խիստ ամբարցված Սանդա-
կուր գիւղը: Վերոգրեալի մասին ամենհպա-
տակութեամբ կը կողմնակցում եմ Ձեր Կայսերական
Մեծութեանը:

15 յունվարի

ՇԱՆԳՀԱՅ, 13 յունվարի: Հաստատ աղբու-
րից հաղորդում են, որ Գերմանիան դիմել է
Զինատեստին, որ թրքախորի իրան զօրանոց-
ներ շինելու զօրքի համար Չինացիներին մէջ,
այն զօրքի, որը պաշտպանում է Տիւրքոյէն
տանող երկաթուղին: Շանգայի նահանգա-
պետը մերժեց այդ խնդրը: Հաղորդում են,
որ գերմանական պահապան զօրքերի թիւն
աւելացված է երկաթուղու բոլոր կայարան-
ներում: Նահանգապետը այդ մասին զեկուցեց
չինական արտաքին գործերի մինիստրու-
թեանը, խնդրելով ցուցումներ:
ՎԼԱԴԻՎՈՍՏՈՎ, 14 յունվարի: Զօրքերի
դրութիւնը, չը նայելով դերքերի գնաւորութե-
անը կանգնելու դաժան պայմաններին, ա-

